# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## 2023Թ. ԱՊՐԻԼԻ 25-ԻՑ 29-Ը ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՍՏՐԱՍԲՈՒՐԳ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1. <u>Անունը, ազգանունը՝</u>**

Վաչե Տերտերյան

**2. <u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

**3. <u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>**

Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Ստրասբուրգ), 2023թ. ապրիլի 25-ից 29-ը

**4. <u>Հրավիրող կողմը.</u>**

Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարության և կառավարման հարցերով եվրոպական կոմիտե (CDDG)

**5. <u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>**

Մասնակցություն Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարության և կառավարման հարցերով եվրոպական կոմիտեի (CDDG) 17-րդ հերթական նիստին և «Կանաչ հանրային կառավարում» համաժողովին:

**6. <u>Քննարկված թեմաները.</u>**

Համաժողովին քննարկվել են՝

- Կանաչ հանրային կառավարում. հրատապ գործողությունների անհրաժեշտությունը,
- Որոշումների կայացման մեջ կլիմայի և բնապահպանական նկատառումների ինտեգրման և ներառման վերաբերյալ հարցեր:

Նիստի ընթացքում քննարկվել են՝

- Լավ ժողովրդավարական կառավարման սկզբունքների վերաբերյալ հանձնարարականի նախագծի և դրա բացատրական հուշագրի վերջնական տարբերակը,

- Կոմիտեի 2023 թվականի աշխատանքային ծրագիրը, մասնավորապես Ժողովրդավարական լավ կառավարման սկզբունքները,
- մասնակցային ժողովրդավարության, բազմաստիճան կառավարման, կանաչ հանրային կառավարման և էլեկտրոնային քվեարկությանը վերաբերող հարցերը,
- խորհրդակցական ժողովրդավարության վերաբերյալ Հանձնարարականի նախագիծը, ընդունման ժամկետները,
- ամփոփվել է Կանաչ հանրային կառավարում համաժողովի աշխատանքները:

7. **<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>**

Իմ ելույթում անդրադարձել եմ հանրային տնտեսության կազմակերպման և կայուն զարգացում ապահովելու համատեքստում ՏԻՄ-երի դերակատարմանը՝ նշելով, որ կլիմայի փոփոխության ազդեցությունը, տնտեսական զարգացման դժվարությունները մեծացնում են ՏԻՄ-երի մասնագիտական կարողությունների զարգացման և տարբեր երկրների փորձի փոխանակման անհրաժեշտությունը: Համաժողովի ընթացքում ներկայացրել եմ վերջին տարիներին Հայաստանում իրականացված մի քանի նախաձեռնություններ. Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող «ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար. Կանաչ համայնք՝ դիմակայուն ապագա» ծրագրի շրջանակներում ՀՀ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի թիրախային 15 համայնքներում «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի կողմից էներգաարդյունավետության, այլընտրանքային էներգիայի, թափոնների կառավարման և կլիմայի փոփոխությանը հարմարվողականության ոլորտներում իրականացված կարիքի գնահատման արդյունքում մշակվել է «Կանաչ» կառավարման մոդել, 2023թ. ապրիլից իրականացվում է «Բնական ռեսուրսների կառավարում», «Էներգաարդյունավետություն և վերականգնվող էներգիա», «Թափոնների կառավարում», ««Կանաչ տրանսպորտի» ընդհանուր նկարագրություն էլեկտրաէներգիայի և Վերականգնվող էներգիայի տեսանկյունից», «Կանաչապատ տարածքների խնամք և կառավարում», «Հանրային-մասնավոր համագործակցության (ՀՄՀ) զարգացում», «Բնապահպանական կրթություն և իրազեկվածության բարձրացում», «Էլեկտրոնային կառավարում», «Ֆինանսների կայուն կառավարում և ֆոնդհայթայթում» և «Ծրագրերի մոնիթորինգ» թեմաներով դասընթացների շարք: Եզրափակելով ելույթը՝ վստահեցրել եմ, որ համաժողովի ընթացքում բարձրաձայնված շատ գաղափարներ կդառնան Հայաստանում իրականացվող ապագա ծրագրերի մի մասը:

CDDG 17-րդ ընթացիկ նիստի ընթացքում իմ ելույթում բարձր եմ գնահատել Կոմիտեի կողմից կատարված արդյունավետ աշխատանքը Լավ ժողովրդավարական կառավարման սկզբունքների և Մասնակցային ժողովրդավարության վերաբերյալ առաջարկությունների նախագծի հաստատման ուղղությամբ: Կարևորել եմ երկրների միջև փորձի փոխանակումը, որը Եվրոպայի խորհրդի անդամակցության առավելություններից է: «Հայաստանի Հանրապետության կառավարությունը ժողովրդավարության և բաց կառավարման հարցերի շրջանակներում Եվրոպայի խորհրդի (ԵԽ) հետ ձևավորել է կայուն և մշտապես զարգացող համագործակցության դաշտ, ինչի մասին է վկայում նաև «Ժողովրդավարական զարգացում. Ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում» ծրագրի 2-րդ փուլի մեկնարկը»:

Անդրադարձել եմ Հայաստանի Հանրապետությունում լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգի նախագծի կազմման աշխատանքներին, բարձր գնահատել Հայաստանի և Վրաստանի անդրսահմանային համագործակցությունը և կարևորել Փորձագիտական կենտրոնի ծրագրերի միջոցով իրականացված Հայաստանի և Վրաստանի սահմանակից համայնքների միջև մինչ այս կայացած Անդրսահմանային համագործակցության Առաջնորդության Ակադեմիայի 3 փուլերը:

Նշել եմ, որ Հայաստանը շարունակելու է իր ակտիվ համագործակցությունը ԵԽ գործընկերների հետ՝ տեղական բարեփոխումների ոլորտում լավագույն փորձի փոխանակման, Ժողովրդավարական լավ կառավարման սկզբունքների պահպանման և զարգացման ուղղությամբ:

**8.<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>**

Նիստի ընթացքում ընդունվել են Ժողովրդավարական լավ կառավարման սկզբունքների և խորհրդակցական ժողովրդավարության վերաբերյալ հանձնարարականների նախագծերը:

**9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>**

Առաջարկվել է շարունակել ակտիվ համագործակցությունը ԵԽ գործընկերների հետ՝ տեղական բարեփոխումների, կանաչ հանրային կառավարման ոլորտում փորձի փոխանակման նպատակով:

**10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>**

_____ 04.05.2023թ.